միջոցով նոյն գիւղի եկեղեցուն եկեղեցական գրքեր։ 28 մարտի. Թ. 496։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երեւանի փոխ-թեմակալին յայտնել Մեղրիի ծխական դպրոցի ուսուցիչ Գէորգ Խարմանեանին Նորին Սրբութեան հետեւեալ մակագրութիւնը փոխ-թեմակալի յայտարարութեան վրայ. «Գոհունակութեամբ կարդալով Երեւանի գերապատիւ փոխ-թեմակալի յայտարարութիւնը ուսուցիչ պ. Գէորգ Խարմանեանի 25-ամեայ օգտաւէտ գործունէութեան մասին դպրոցական ասպարիզում, օրհնում ենք ուսուցիչ պ. Գէորգ Խարմանեանին ու նրա բեղմնաւոր վաստակը և մաղթում առողջ կեանք և եռանդ այսուհետև ևս շարունակելու մատաղերամ մանկանց դաստիարակութեան վեհ գործը»։ 29 մարտի. Թ. 504։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Կոնդակ օրհնութեան երդուեալ հաւատարմատար պ. Միքայէլ Պապաջանեանի անունով. 17 փետրուարի. Թ. 322։

Կոնդակ օրհնութեան երդուեալ հաւատարմատար պ. Յովհաննէս Սաղաթէլեանի անունով. 17 փետրուարի. Թ. 323։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական պատուարժան խորհրդի անդամների անունով. 19 փետրուարի. Թ. 331։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը Բագուի Տ. Գրիգոր աւագ քահանային իւր կազմած «Մոխակ Հայաստանի» մի օրինակը Վեհին նուիրաբերելու համար։ 23 փետր. Թ. 336։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կոնդակ Եւրոպայի Հայոց Առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Իւթուճեանի անունով, որով արքութեան պատիւ շնորհուեց։ 20 մարտի. Թ. 463։